



Ամսաթիվ՝
Վարկի համար՝

11 հունիս 2016թ.
2993 – ARM, Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի
ներդրումային ծրագիր, Տրանշ 3
Պայմանագիր 03-IC-003 – Դաշտային աշխատանքների
համակարգող

Պայմանագրի համարը և անունը՝

Պայմանագիր 03-IC-003 – Դաշտային աշխատանքների
համակարգող

Հայտի ներկայացման վերջնաժամկետ՝ 17 հունիս 2016թ.

Հայաստանի Հանրապետությունը վարկ է ստացել Ասիական զարգացման բանկի (ԱԶԲ) հատուկ ֆոնդի միջոցներից՝ Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման համար, և մտադիր է գումարի մի մասը հատկացնել 03-IC-003 պայմանագրով նախատեսված համապատասխան վճարումները կատարելու համար: Պայմանագրի պայմանները և ԱԶԲ-ի կողմից վճարումները կկատարվեն Վարկային համաձայնագրի պայմաններին և ԱԶԲ-ի և իր վարկառուների կողմից խորհրդատուների վարձման ուղեցույցների համաձայն: Բացառությամբ ԱԶԲ-ի կողմից հատուկ համաձայնության դեպքերի ոչ մի այլ երրորդ կողմ, բացի ՀՀ կառավարությունից, վարկի գումարի նկատմամբ չի կարող որևէ իրավունք ունենալ կամ պահանջ ներկայացնել:

Դաշտային աշխատանքների համակարգող

ԾԻԿ-ը կվարձի ազգային անհատ-խորհրդատուի, ով գերադասելի է որ ունենա 3 տարվա աշխատանքային փորձ բազմագործառուության թիմերի, հողի օտարման և տարաբնակեցման հետ կապված աշխատանքների կառավարման և համակարգման ոլորտում, ունենա բակալավրի աստիճան սոցիալական գիտություններում կամ հողի կառավարման կամ տեխնիկական գիտություններում կամ համապատասխան ոլորտներում՝ տեղյակ լինելով ԱԶԲ Անվտանգության քաղաքականության հայտատարությանը (2009թ): Դաշտային աշխատանքները համակարգողը պետք է ունենա ՀՀ հողի օտարման աշխատանքային գիտելիքներ, այդ թվում ՀՕՏՕ պատրաստման և իրականացման մեջ ներառված հաստատություններում: Անգլերեն գրավոր և բանավոր իմացությունը ցանկալի է: Դաշտային աշխատանքները համակարգողի մանրամասն հիմնական գործառույթներն են՝

- 1) համակարգել անհատ խորհրդատուի գործունեությունը՝ հիմք ընդունելով ՀՕՏՕ իրականացման մշակված մանրամասն գործողությունների պլանը,
- 2) բաժանել աշխատանքը իրականացման թիմի անդամների միջև՝ սերտ համագործակցելով անհատ խորհրդատուի խմբի ավագի հետ,
- 3) ծրագրավորել և վերահսկել ՀՕՏՕ իրականացման գործընթացը և իրականացնող թիմի կողմից կատարված աշխատանքների ամբողջական տեղեկատվական բազան, որը արտացոլում է իրականացման գործընթացը և վարվում է անհատ խորհրդատուի կողմից՝ ՊՈԱԿ-ի Իրավական և արտաքին ազդեցության ստորաբաժանման հետ համատեղ,
- 4) համակարգել անհատ խորհրդատուի և ՊՈԱԿ փոխգործակցությունը, ինչպես նաև գործընթացում ներգրավված տարբեր պետական, համայնքային և այլ մարմինների համագործակցությունը, կազմակերպել քննարկումներ և հանդիպումներ, ըստ անհրաժեշտության,
- 5) աշխատանքային շաբաթվա վերջում ՊՈԱԿ ներկայացնել անհատ խորհրդատուի կողմից իրականացված կադաստրի և նոտարական գործողությունների ցանկը ՀՕՏՕ իրականացման շրջանակներում, յուրաքանչյուր շաբաթվա համար համապատասխան ծախսերով,
- 6) ՊՈԱԿ ներկայացնել ընթացիկ համառոտ տեղեկատվություն և տվյալներ ՀՕՏՕ աշխատանքների շաբաթական (կամ ավելի հաճախ, ըստ ԾԻԿ պահանջի) առաջընթացի վերաբերյալ (ներառյալ ԱԵԱ հետ կնքված օտարման պայմանագրերի ստուգված մանրամասները, հողերի նոր սեփականության վկայականները՝ զրանցված ՀՀ-ի անվանք հիմք ընդունելով օտարման պայմանագրերը, ԱԵԱ ծանուցումների վերաբերյալ տվյալներ, ավանդի փոխհատուցման չափը, իրականացման օրինականացման դեպքերը, սեփականագրկման դեպքերը),
- 7) ՊՈԱԿ քննարկմանը ներկայացնել խոչընդոտների և խնդրահարույց դեպքերի նկարագրությունը, որոնք առաջացել են ՀՕՏՕ իրականացման ընթացքում և առաջարկել լուծման մեխանիզմներ,

- 8) ՊՈԱԿ-ին ներկայացնել ՀՕՏԾ իրականացման և ՀՕՏ վերաբերյալ տվյալների ընթացիկ միջազգային գործընթացը (նախնական ուսումնասիրությունների միջոցով, ըստ անհրաժեշտության, դաշտային այցեր) քննարկումների և հետագա դեպքերի համար, ներառյալ.
 - այն դեպքերը, որոնք պետք է հանձնվեն անհատ խորհրդատուին համապատասխան եզրակացությամբ և հիմնավորմամբ,
 - ՀՕՏ ուղղման միջոցառումների համար պահանջվող դեպքեր,
- 9) ՈւԳԾ-ի և ՀՕՏԼԾ-ի կողմից իրականացված գործողությունների վերահսկողություն և ստուգում՝ երաշխավորելու հստակ իրականացում՝ ըստ համաձայնեցված ժամանակացույցի,
- 10) ստուգել, արդյոք նոր տեղեկատվությունը/տվյալները վավերացվել են և ներմուծվել ՀՕՏԾ տվյալների բազա,
- 11) աջակցել և առաջնորդել անհատ խորհրդատուի տվյալների բազայի մասնագետին տվյալների բազայի կառավարման և բարելավման իրականացման գործընթացում,
- 12) աջակցել ԾԻԿ-ին ՀՕՏԾ արտաքին մոնիտորինգի ընկերակցության պահանջներին անդրադառնալու գործընթացում իրականացման հաշվետվությունների պատրաստման ընթացքում (ներառյալ պահանջվող տվյալների, վկայականների, պարզաբանումների տրամադրումը, և այլն),
- 13) համակարգել և երաշխավորել ԱՄԳ-ի կողմից պատրաստված ուղղիչ գործողությունների պլանի հստակ իրականացում, (առկայության դեպքում),
- 14) վերանայել և աջակցել ԾԻԿ-ին արձագանքել ՀՕՏԾ իրականացման ընթացքում առաջացած ցանկացած բողոքներին կամ դժգոհություններին,
- 15) աջակցել անհատ խորհրդատուին կազմակերպել և իրականացնել ազդեցության ենթակա անձանց ծանուցումը հանրային գերակա շահի ընթացակարգերի վերաբերյալ (ներառյալ սեփականության բռնագրավման փուլում)
- 16) դատարաններում ապահովել անհրաժեշտ տեղեկատվության, տեղեկանքների և տվյալների ստացումը պետական, համայնքային և այլ մարմիններից՝ հողի օտարման գործընթացում,
- 17) ՊՈԱԿ-ին ներկայացնել ՀՕՏԾ ամսական առաջընթացի և ավարտական հաշվետվությունները՝ ըստ ԾԻԿ պահանջների:

Ընտրության եղանակը՝	Անհատ խորհրդատուի ընտրություն (ICS)
Պայմանագրի տեսակը՝	Միանվագ վճարումներով
Գնահատված բյուջեն՝	18,199 ԱՄՆ դոլար
Մասնագիտական անձնակազմի ներգրավում՝	11 մարդ-ամիս
Առաջադրանքի իրականացման տևողությունը՝	242 աշխատանքային օր
Աշխատանքների սպասվելիք սկիզբը՝	15 հուլիս 2016թ.
Աշխատանքների սպասվելիք ավարտը՝	15 հուլիս 2017թ.
Խորհրդատուների տեսակ՝	ազգային անհատ-խորհրդատու

Հայտերի ներկայացում՝

Հետաքրքրվող մասնակիցները կարող են գտնել և բեռնել հետաքրքրության հայտի ձևն ու ցանկացած այլ առնչվող տեղեկատվություն (անվճար) ԱԶԲ-ի Խորհրդատուների Կառավարման Համակարգի հետևյալ ինտերնետային կայքից՝ <http://www.cms.adb.org>: Հետաքրքրության հայտի ձևը մասնակիցները կարող են ձեռք բերել նաև info@northsouth.am էլեկտրոնային հասցեին ուղարկելով էլեկտրոնային նամակ:

Հետաքրքրության հայտերը պետք է ներկայացվեն էլեկտրոնային եղանակով՝ <http://www.cms.adb.org> ԱԶԲ-ի Խորհրդատուների Կառավարման Համակարգի միջոցով, ոչ ուշ, քան 17 հունիս 2016թ.:

Կազմակերպության անվանումը՝ Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն ՊՈԱԿ:

Հասցեն՝ ՀՀ. Ք. Երևան 0002, Պուշկինի փողոց, թիվ 58 շենք

Հեռախոս՝ (+37460) 50-68-70 (-71)

Հարցերի համար դիմել՝ Սերգեյ Սարգսյան, գնումների մասնագետ

Էլեկտրոնային հասցե info@northsouth.am